

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2014 թ.

N 527-Ն

ք. Ստեփանակերտ

**ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵԺԻՄԱՅԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ, ՋՐԱՅԻՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ՍՊԱՌՈՒՄԻՑ ԵՎ ԱՂՏՈՏՈՒՄԻՑ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետին, 64-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և 67-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Սահմանել ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ ռեժիմային դիտարկումների, ջրային ռեսուրսները սպառումից և աղտոտումից պահպանելու միջոցառումների կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵԺԻՄԱՅԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ, ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐՆ ՍՊԱՌՈՒՄԻՑ ԵՎ ԱՂՏՈՏՈՒՄԻՑ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

1. Սույն կարգով սահմանվում են ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ ռեժիմային դիտարկումներին, ջրային ռեսուրսներն սպառումից և աղտոտումից պահպանելու միջոցառումներին ներկայացվող հիմնական պահանջները:

2. Ռեժիմային դիտարկումները բնական և տեխնաժին գործոնների ազդեցության հետևանքով ստորերկրյա հանքային ջրերի շահագործվող հանքավայրերի ջրային ռեսուրսների վիճակի (որակի, քանակի) փոփոխման նկատմամբ պարբերաբար իրականացվող գործողությունների (ջրի ծախսի, ճնշման, մակարդակի, ջերմաստիճանի չափում, նմուշառում, քիմիական անալիզի իրականացում, զգայորոշման ցուցանիշների որոշում, ստացված արդյունքների վերլուծություն, ամփոփում) համակարգն է, որն իրականացվում է տվյալ հանքավայրը շահագործող ընդերքօգտագործողի կողմից սեփական միջոցների հաշվին:

3. Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ ռեժիմային դիտարկումների (այսուհետ՝ դիտարկում) նպատակն է՝

1) հանքավայրի շահագործման ժամանակ հանքային ջրի քանակի և որակի կայունության պահպանումը.

2) հնարավոր սպառման և աղտոտման բացահայտումն ու նախազգուշացումը.

3) ստորերկրյա հանքային ջրերի բնական ու խախտված ռեժիմների և դրանց ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը.

4) ստորերկրյա հանքային ջրերի ռեժիմի կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և վերլուծությունը.

5) ստորերկրյա հանքային ջրերի աղտոտման և սպառման աստիճանի գնահատման մասին հենակետային տվյալների ստացումը.

6) ստորերկրյա հանքային ջրերի շահագործվող հանքավայրերում ջրի ծախսի, ճնշման կամ մակարդակի և ջերմաստիճանի չափումների, ինչպես նաև ֆիզիկաքիմիական անալիզների իրականացումը, ստորերկրյա ջրերի պաշարների վերագնահատման օպերատիվ տվյալների հավաքագրումը, մշակումը և ամփոփումը.

7) ամփոփ տվյալների հիման վրա առաջարկությունների մշակումը և ներկայացումը լիազոր մարմնին:

4. Դիտարկումները ներառում են շահագործական հորատանցքերի կամ աղբյուրների ծախսերի, շահագործական և դիտարկային հորատանցքերում ջրի ճնշման, մակարդակի, ջրի ջերմաստիճանի և որակի փոփոխման, շահագործական և դիտարկային հորատանցքերի տեխնիկական վիճակի ու սանիտարական պահպանման գոտու նկատմամբ պարբերական դիտարկումները:

5. Դիտարկումներն իրականացվում են ջրի ծախսի չափման, ջրի նմուշառման, ջրի նմուշների լաբորատոր հետազոտության, շահագործական հորատանցքերի փորձարկման և հանքային ստորերկրյա ջրերի ձևավորման պայմանների ուսումնասիրման նպատակով մասնագիտական հետազոտությունների, հաստատված պաշարների և իրական ջրառի համապատասխանության, ինչպես նաև հաստատված պաշարների ճշգրտման նպատակով շահագործման ռեժիմի մոդելավորման միջոցով:

6. Հետազոտության համար նմուշառված հանքային ջրի որակի, մանրէաբանական, զգայորոշման և ռադիոլոգիական ցուցանիշների լաբորատոր հետազոտությունները կատարվում են համապատասխան ոլորտի հավատարմագրված լաբորատորիաներում:

7. Ընդերքօգտագործողները դիտարկումները պետք է իրականացնեն հանքավայրի հաստատված պաշարների և կոնդիցիոն չափորոշիչների շրջանակներում՝ միաժամանակ ուսումնասիրելով նոր բաղադրիչներ, որոնք կարող են էականորեն փոփոխել հանքային ջրի ծախսը և որակական հատկանիշները: Դիտարկումներ պետք է իրականացվեն նաև մանրէաբանական, զգայորոշման և ռադիոլոգիական ցուցանիշներով:

8. Լաբորատոր պայմաններում պետք է որոշվեն հանքային ջրի հանքավայրի հաստատված պաշարների և կոնդիցիոններին համապատասխան որակական հատկանիշները:

9. Ընդերքօգտագործողները հանքային ջրի որակական հատկանիշների հանդեպ դիտարկումներն իրականացնում են տարեկան չորս անգամ, այդ թվում՝ նաև հանքավայրի (հորատանցքի կամ աղբյուրի) առավելագույն և նվազագույն ծախսերի ժամանակ: Յուրաքանչյուր դիտարկման արդյունքում լրացվում է հանքային ջրի հանքավայրի դիտարկման արձանագրությունը՝ համաձայն NN 1 և 2 ձևերի: Հանքային ջրի ծախսի, ճնշման, մակարդակի և ջերմաստիճանի դիտարկումներն իրականացվում են ամիսը երեք անգամ (10 օրը մեկ անգամ) և գրանցվում են դիտարկումների մատյանում՝ համաձայն N 3 ձևի:

10. Ընդերքօգտագործողները յուրաքանչյուր հանքավայրի ըստ հաստատված պաշարների կոնդիցիոն չափորոշիչներից որևէ մեկի էական շեղումներ հայտնաբերելու դեպքում դիտարկումներն իրականացվում են ուժեղացված ռեժիմով՝

1) ջրի ծախսի, ճնշման, մակարդակի և ջերմաստիճանի դիտարկումներն իրականացվում են ամեն օր:

2) ջրի որակական հատկանիշների հանդեպ դիտարկումներն իրականացվում են հինգ օրը մեկ անգամ:

3) ուժեղացված ռեժիմով դիտարկումներն իրականացվում են այնքան ժամանակ, քանի դեռ չի վերականգնվում հաստատված պաշարների կոնդիցիոն չափորոշիչների կայուն ռեժիմը:

11. Ստորերկրյա հանքային ջրերի շահագործվող հանքավայրերն աղտոտումից զերծ պահելու և պահպանությունն ապահովելու նպատակով ստեղծված սանիտարական պահպանման գոտիներում դիտարկումներն իրականացվում են առողջապահության ոլորտի լիազոր մարմնի սահմանած կարգով:

12. Դիտարկման արդյունքում յուրաքանչյուր հանքավայրի համար ստեղծվում է տվյալների բազա՝ շտեմարան, որտեղ պարբերաբար գրանցվում են դիտարկման արդյունքները: Կազմվում են հանքային ջրի ծախսի, ճնշման կամ մակարդակի կորեր և այլ գրաֆիկական պատկերներ, որտեղ արտացոլվում են տվյալ հանքավայրին յուրահատուկ չափորոշիչների փոփոխման առանձնահատկությունները:

13. Դիտարկման արդյունքում հանքային ջրերի հանքավայրին բնորոշ և հաստատված քանակական և որակական չափորոշիչներից էական շեղումներ հայտնաբերելու դեպքում բացահայտվում են պատճառները, մշակվում ու իրականացվում է կանխարգելիչ միջոցառումների ծրագիր՝ հանքավայրի ջրային ռեսուրսներն սպառումից և աղտոտումից պահպանելու համար:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

_____ 20 թ.

- Ընդերքօգտագործող _____
1. Հանքավայրի անվանումը, հանքային ջրի տիպը _____
 2. Հորատանցքի համարը _____
 3. Աղբյուրի անվանումը _____
 4. Ջրաղբյուրի բացարձակ նիշը _____
 5. Ճնշումը կամ ջրի մակարդակը _____
 6. Ջրատար հորիզոնի բնութագիրը և տեղադրման խորությունը _____
 7. Ջրառը (կապտաժր) և նրա տեսակը _____
 8. Ծախսը _____ 9. Ջերմաստիճանը՝ ջրի _____, օդի _____
 10. Նմուշառման ամսաթիվը _____ 11. Անալիզի ամսաթիվը _____
 12. Չոր նստվածք _____ 13. pH _____ 14. Eh _____
 15. Գազեր՝ գրամներով 1 լիտր ջրում՝
ածխաթթու գազ ընդհանուր _____
ածխաթթու գազ ազատ _____
 16. Գազային կազմը ծավալային տոկոսներով _____
ինքնակամ (սպոնտան) _____
լուծված _____
 17. Ընդհանուր գազային գործոնը _____
 18. Զգայաորոշական ցուցանիշներ՝
գունավորում _____
հոտ _____
համ _____
պղտորություն _____

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՆԱԼԻԶԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

_____ 20 թ.

Հանքավայրի անվանումը _____
 Հորատանցքի համարը կամ աղբյուրի անվանումը _____

Ցուցանիշի անվանումը	Պարունակությունը 1.0 լիտրում			Ցուցանիշի արժեքը սահմանող ՆՓ-ի համարը
	մգ/լ	մգ-էկվ	մգ-էկվ, %	
Նատրիում, Na ⁺				
Կալիում K ⁺				
Ամոնիում, NH ₄ ⁺				
Կալցիում, Ca ²⁺				
Մագնեզիում, Mg ²⁺				
Երկաթ, Fe ⁺⁺				
Երկաթ, Fe ⁺⁺⁺				
Ընդամենը, կատիոններ՝				
Սուլֆատ, SO ₄ ²⁻				
Քլորիդ, Cl ⁻				
Նիտրիտ, NO ₂ ⁻				
Նիտրատ, NO ₃ ⁻				
Հիդրոկարբոնատ, HCO ₃ ⁻				
Յոդ, I ⁻				
Բրոմ, Br ⁻				
Ֆտորիդ, F ⁻				
Հիդրոսուլֆիդ HS ⁻				
Կարբոնատ CO ₃ ²⁻				
Հիդրոարսենիտ H ₂ AsO ₄ ²⁻				
Ընդամենը, անիոններ՝				
Ընդհանուր հանքայնացում				
pH				
Չդիսոսվող մոլեկուլներ՝				
Մետաբորաթթու HBO ₂				
Ծծմբաջրածին ընդ. (H ₂ S+HS)				
Սիլիկաթթու, H ₂ SiO ₃				
Արսենաթթու H ₃ AsO ₃ կամ H ₃ AsO ₄				
Ածխածնի երկօքսիդ CO ₂				
Ֆիզիկական հատկություններ				
Պղտորությունը				
Համը				
Հոտը				
Գույնը				
Նստվածք				

